ներ եւ առասպելներ։ Դրանք մի ընդհանուր դիմ ունին հեղինակի՝ ժողովրդական մոտիւով գրուած ոտանաւորների հետ։ Մի դէպքում ներկան է պատկերացուած, միւս դէպքում՝ անցեալը, բայց երկու դէպքում էլ՝ ժողովրդականը։

Այսպէս, շատ յայտնի է Յովհաննիսեանի «Արտաւազդ» ոտանաւորը, գրուած դեռ շատ երիտասարդ հասակում։ Այդտեղ նա գրական մշակման է ենթարկել հայկական հին ու ծանօթ առասպելը Արտաւազդի մասին։ Ոտանաւորում արտայայտուած ենք գտնում նաեւ մեր ժողովրդական մի հին սովորութիւնը, որ մինչեւ օրս էլ պահուած է շատ տեղ հայ գիւղերում, եւ որը սերտիւ կապուած է Արտաւազդի առասպելի հետ։ Այդ այն է, որ աւագ ուրբաթ օրը Հայաստանի դարբինները կէս գիշերին վեր են կենում, մտնում իրենց դարբնոցը ու երեք անդամ մուրճը սալին խլեցնում, ամրացնելու համար «չար արքայի» կապանքները։

Բնութեան մի ամբողջ պատկեր է ներկայացուած ոտանաւորի սկզբում։ Ահարկու ամպերը եկել պատել են Մասիսի ճակատը։ Փոթորիկը դազանի նման ոռնում է։ Կատաղած քամին հառաչում, սուլում է։ Զար հողմի հետ միասին՝ Մասսի վիհից հասնում են ձայներ — շղթայակապ արքայի մռնչոցը։ Նրա աչքից դէպ խվեր են ցոլանում փայլակ եւ բարկութեան կայծեր։

Կամի նա ելանել վրէժխնդիր հոգով
Իւր անվերջ տանջանքի թոյնը մահաբեր
Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,
Բայց՝ ամո՛ւր են նորա ծանր շղթաներ։

Մտերիմ դամփռները կրծում են արքայի կապանքները, մաշում, բայց դրանք նորէն ու նորէն ամրանում են դարբինների հարուածների տակ։

Բանաստեղծը այս պատմական առասպելի մէջ դրել է ժամանակակից-հասարակական տրամադրութիւններ, որ արուեստական են դարձնում գործը։ «Եթէ», ասում է նա դարբինների բերնով, «նոր կեանքի հուժկու կոչը չենք լսելու մենք», «եթէ վերածնութեան սրբարար աւազանը մեզ չէ փրկելու», այդ պարագային աւելի լաւ է որ փչրուին արքայի շղթաները, եւ նա դուրս գայ «աշխարհին բերելու կոտորած, աւեր»։ Եւ սակայն, լաւատեսութիւնը յաղթում է վերջը։ Բանաստեղծը դեռ հաւատում է փրկութեան։ Նա յոյս ունի, որ «մի նոր երկնքից նոր լոյս կը բացուի»։ Արդէն իսկ տեսնում է «ծիածանը մի ազատ, լուսաւոր, նոր վիճակի»։ Դրա համար էլ վերջացընում է իր ոտանաւորը այն տողերով, որոնցով սկսել էր։—

Զարկեցէ՛ք, դարբիններ, կըռանը սալին
Զարկեցէք կըռանը — շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան,
Զարկեցէ՛ք, դարբիններ, կըռանը սալին։

Տեսնում ենք ուրեմն, որ Յովհաննիսեան մշակել է Արտաւազդի առասպելի այն փոփոխակը (վարիանտ), որ մեզ պահել է Խորենացին, համաձայն որի՝ Արտաւազդը չարութեան մարմնացումն է։ Արտաւազդի պատկերը նոյն առասպելի մի ուրիշ փչրանքի մէջ, որ պահուած է Եղնիկի մօտ, բոլորովին տարբեր է, միանգամայն հակառակը, որ անուշադրութեան է մատնուած եղել, սկզբից ի վեր։ Նոյնը պէտք է ասել նաեւ Վասակի դէմքի մասին։ Սկսած Եղիշէից եւ վերջացրած Յովհաննիսեանով՝ հայ բանաստեղծութիւնը — նրա ազդեցութեան տակ նաեւ հայ պատմագրութիւնը չարունակում են մուր քսել Վասակի երեսին, որպէս մարմնացումն դաւաճանութեան եւ չարութեան, մի երկրորդ Արտաւազդ։ Խորենացին եւ Եղիշէն չարունակում են իշխել ոչ միայն մեր զգացումների, այլ եւ մեր մտքի վրայ։ Եղնիկին եւ Կորիւնին ուշք դարձնող չկայ։ (Դժբախտաբար ձեռքի տակ չունինք Յովհաննիսեանի «Վասակը բանտում» բաւական երկար չափածոյ գրուածքը, աւելի երկար կանգ առնելու համար նրա վրայ)։

Յովհաննիսեան մշակել է նաեւ Վահագնի առասպելը, իր «Վահագնի ծնունդը» ոտանաւորով։ Սրա առաջին մասը գրեթէ պարզ փոխադրութիւն է Խորենացու պահած պատառիկի, իսկ երկրորդ մասի մէջ դարձեալ ժամանակակից-հասարակական մոտիւներ է գրել բանաստեղծը։ Նորածին Վահագնի, այդ «ահեղամռունչ մանկիկի» առջեւ, որ հուր-հեր ունի գլխին, որի աչերն արեգակ են, ծովահալած մրրիկը դաղար պիտի առնի, արեւը պիտի իր երեսը քօղով ծածկէ, քաջածին Մասիսն էլ